



TK&PARTNERS
WEEKLY CLIENT ALERT N 33

1. Կառավարության որոշումներ
2. Սատանի կամուրջ

#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՎԵՐՋ ԵԿԱՍՏԱՀԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՕՐԵՆՔԻՆ

2021 թվականի օգոստոսի 12-ին ՀՀ Կառավարությունը հաստատել է օրենքի փոփոխության նախագիծ, որով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածում (հասարակությանը ավելի հայտնի որպես «եկամտահարկի վերադարձի օրենք») կատարել փոփոխություններ, որով հիպոտեկային վարկի սպասարկման համար անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկը՝

1. 2022 թվականի հուլիսի 1-ից հետո ստացած հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվելու, եթե անշարժ գույքը գտնվում է (կառուցվում է կամ կառուցվելու է) ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված առաջին գոտում,
2. 2023 թվականի հունվարի 1-ից հետո ստացած հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվելու, եթե անշարժ գույքը գտնվում է (կառուցվում է կամ կառուցվելու է) ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված երկրորդ գոտում,
3. 2023 թվականի հուլիսի 1-ից հետո ստացած հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվելու, եթե անշարժ գույքը գտնվում է (կառուցվում է կամ կառուցվելու է) ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված երրորդ գոտում,
4. 2025 թվականի հունվարի 1-ից հետո ստացած հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվելու, եթե անշարժ գույքը գտնվում է (կառուցվում է կամ կառուցվելու է) ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերում չնշված գոտում:

ՀՀ ԱԺ-ի կողմից օրենքի ընդունման պարագայում օրենքը ուժի մեջ կմտնի 2022 թվականի հունվարի 1-ից:

Սակային այս սահմանափակումները չեն կիրառվելու մինչև 2022 թվականի հունվարի 1-ն ընդունված որոշումներով ստացված շինարարության թույլտվությունների հիման վրա կառուցված (կառուցվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կամ անհատական բնակելի տների նկատմամբ:

Ավելին՝ [հղումով](#)

ՕՐԻՆԱՊԱՀ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ



2021 թվականի օգոստոսի 12-ին Պետական եկամուտների կոմիտեն ՀՀ Կառավարություն է ներկայացրել նախագիծ, որով սահմանում է օրինապահ հարկ վճարող համարելու չափանիշները:

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի 293.1. հոդվածի՝ հատուկ չափանիշները բավարարելու դեպքում համապատասխան հավաստագրի տրամադրման միջոցով հավաստվում է հարկ վճարողի օրինապահությունը: Օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ունեցող հարկ վճարողների համար Հարկային օրենսգրքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել վարչարարության իրականացման բարենպաստ պայմաններ:

Ըստ օրենքի նախագծի՝ օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը տրամադրվում է ԱԱՀ վճարող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից կոնկրետ ժամանակահատվածում իրականացված փաստացի գործունեության արդյունքների համար 8 չափանիշների միաժամանակյա բավարարման դեպքում, որոնց կարող էք ծանոթանալ [այստեղ](#):



#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԿԻՆ ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻՆ

2021 թվականի օգոստոսի 12-ին ՀՀ Կառավարությունը ընդունել է աջակցության ծրագիր ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի ընդունած գործատուներին :

Աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անձի համար՝ գործատուին տրամադրվում է աջակցություն՝ այդ անձի աշխատավարձից հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափով, եռամսյակային կտրվածքով՝ առավելագույնը 100,000 դրամի չափով և միանվագ փոխհատուցում՝ ոչ ավելի, քան 500,000 դրամի չափով գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման անհրաժեշտության դեպքում:

Աջակցության տրամադրման կարգի մանրամասներին կարող եք ծանոթանալ այստեղ:



#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

ՄԱՏԱՆԻ ԿԱՄՈՐՋ



Մատանի կամուրջ՝ բնական կամուրջ Ռրոտան գետի վրա, ՀՀ Սյունիքի մարզում: Երկարությունը մոտ 30 մ է, լայնությունը՝ 50-60 մ: Գոյացել է շրջակայքի հանքային աղբյուրների կրաքարային նստվածքներից՝ տրավերտիններից: Շրջակայքում և կամրջի տակ կան շթաքարեր ու պտկաքարեր: Մատանի կամրջի վրայով է անցնում Գորիս-Տաթև ավտոճանապարհը:

«Մատանի կամուրջ» անվան հետ կապված տարբեր վարկածներ կան: Ոմանք ասում են, որ անունը կապված է կամրջի տակ ջրում խեղդվելու բազմաթիվ դեպքերի հետ:

Կա վարկած, որ ավելի քիչ ջուր է մտնում կամրջի տակ քան դուրս է գալիս: Դա պայմանավորված է նրանով, որ վերևից հանքային ջրեր են կաթկթում:

Հնարավոր է լողալով անցնել կամրջի տակով և դուրս գալ հակառակ կողմից, բայց դա կարելի է անել միայն լավ լողալ իմացողներին, փորձառու մարդու ուղեկցությամբ, և սակավաջուր ամիսներին (օգոստոս, սեպտեմբեր): Մատանի կամրջի տակով անցումի տեսանյութը դիտեք [այստեղ](#)

[Աղբյուրը](#)



#YourSupportTeam
Collaborating firm with Andersen Global!



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS